ԳԱԳԻԿ ԱՐԾՐՈՒՆԻ ԵՎ ԳԱԳԻԿ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹՂԹԵՐԸ ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ԱՐՔՈՒՆԻՔԻՆ

Դոկտոր ՄԵՍՐՈՊ ԳՐԻԳՈՐՅԱՆ (ՎԻԵՆՆԱ)

Գագիկ Արծրունի և Գագիկ Բագրատունի թագավորներու հավատո գիրերը՝ հայ մատենագրության արժեքավոր նշխարներ են, որոնք շահեկանություն կներկայացնեն թե՛ միջեկեղեցական և թե՛ քաղաքական տեսակետե։ Գագիկ Արծրունի (879—շ. 943) հիմնադիրն է Վասպուրականի հայկական տեղական թագավորության (908) և կառուցողը Աղթամարի Ս. Խաչ եկեղեցվո (915—921/22), որ ամենեն գեղեցիկ և նշանակալից հուշարձաններեն մին կհանդիսանա Հայաստան աշխարհի։ Համենայն դեպս իր աստվածաբանական հմտության և եկեղեցական նախաձեռնությանց մասին հավաստի տեղեկություններ կգտնենք հայագիտական գրականության մեջ։ 927 թ. Հովհաննես Ե Դրասխանակերտցի կաթողիկոս (897—929) ընդհանրական հայրապետության Աթոռը Անիեն և Զորավանքեն փոխադրեց Աղթամար, ուր բնակեցան և գործեցին իր երեք հաջորդները՝ մինչև 946։ Կամ այս առթիվ և կամ Ստեփանոս Ռշտունի (929—930) կամ Թեոդորոս Ռշտունի (930—941) կաթողիկոսներու ընտրության առնչությամբ՝ Գագիկ Արծրունի գրած է երկախոսության և հաշտության աստվածաբանական նամակ մը Ռոմանոս Լեկապենոս (920—944) կայսեր Ե բյուզանդական եկեղեցվո ժամանակակից պետին, որ մեծագույն հավանականությամբ Տրյուփոն պատրիարքը (դեկտ. 927—օգոստոս 931) պիտի ըլլա։ Օրմանյան[1] կթելադրե շուրջ 930—31 տարին որպես Գագիկի թուղթի գրության թվական, երբ Հովհաննես և Թեոփիլոս Գուրգուաս զորավարները հաղթական հարձակումներ կգործեին Հայաստանի՝ մահմեդականաց կողմե գրավյալ քաղաքներուն վրա՝ Դվին, Մելիտենե, Սամոսատ, Խլաթ, Էրզրում և։ Արդարև Իբն ալ-Ասիր 319/931—32 թ. նեղքոյ կհաղորդե թե Իբն ալ-Դայրանի / Գագիկ Արծրունի և այլ հայազգի իշխաններ գրեցին բյուզանդացվոց՝ որպեսզի հարձակին մահմեդականաց վրա և այս առնչությամբ խոստացան իրենց օժանդակությունը. «Այդ տարին Իբն ալ-Դայրանին և Հայաստանի ծայրամասային գավառներու այլ հայազգի իշխաններ գրեցին հոռոմներուն, դրդելով հարձակիլ իսլամի երկրին վրա և խոստանալով իրենց օգնությունը։ Հոռոմները մեծ բազմությամբ հարձակեցան, ավերեցին Բերկրին, Խլաթը իր շրջակայքով, մահմեդականներեն շատերուն սպաննեցին և մեծ բազմություն գերեցին» և այլն[2]։

Արաբ պատմիչին հաղորդած սույն տեղեկության հիման վրա Վ. Վարդանյան ևս Գագիկ թագավորի նամակը առ կայսրն հունաց՝ գրյալ կհամարե 931-ին[3]։ Հիրավի սակայն Դոմեստիկոս Հովհաննես Գուրգուաս, իր եղբայրը և հայոց Մելիք Մելիաս արդեն 926-ի հունիսին ձեռնարկած էին Մելիտենեի վրա հաջող հարձակման, և հաջորդ տարին՝ երբ Բյուզանդիոն Բուլգարիո հետ խաղաղության դաշինք կնքեց, կայսրը իր ուժերը կենտրոնացուց արևել-

---

1 Մ. Օրմանյան. Ազգապատում. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 1078—80։

2 Իբն ալ-Ասիր (Արաբական աղբյուրներ, Բ). Լիակատար պատմություն, թարգ. Արամ Տեր-Ղևոնդյան. Երևան, 1981, էջ 179։ Գուրգուաս եղբարց զինվորական գործունեության մասին տե՛ս A. A. Vasiliev. Byzance et les Arabes. T. II, Les relations politiques de Byzance et des Arabes a l epoque de la dynastie macédonienne 867—959 (253—348), première partie. Bruxelles, 1968, 261—73.

3 Վ. Վարդանյան. Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը (908—1021 թթ.). Երևան, 1969, էջ 104—105։

յան սահմաններու վրա։ Այդ պատճառով Ռանսիման[4], հետևելով Չամչյանի[5], Արծրունի թագավորին աստվածաբանական թուղթը կնշանակե 926—27 թ.։ Սույն պարագային Կ. Պոլսո պատրիարքը կհանդիսանա Ստեփանոս Բ (հնս. 925—հլս. 927)[6]։

Գագիկ արքա իր նամակը ուղղյալ է «առ սուրբ և քրիստոսապակյալ թագավորն» Ռոմանոս և «սուրբ և բարձրագահ արքեպիսկոպոսիդ և առաքելաժառանգ պատրիարքիդ» և կհաստատե թե «բնաբար ունէաք աշխարհս Հայոց զհնազանդութիւն կայսերական Աթոռոյդ և հայրապետական գահակալութեանդ»[7]։ Նա իր լավատեսության և բարի կամեցողության մեջ խանդավառվելով՝ մինչև իսկ կհայտարարե. «Զի ոչ միայն սիրողաբար հարկս հարկանէաք Կայսեր, այլև առ սուրբ հաւատոյն միավորութիւն խոստովանութեան հաղորդս և հաւասարս գտանէաք»[8]։ Հետագա տողերեն հստակորեն կհայտնվի, թե Արծրունի ի մտի ուներ եկեղեցական պատմության նախաքաղկեդոնական ժամանակաշրջանը։ Դրվատելե ետք առաջին երեք տիեզերական ժողովները՝ Նիկիո 325 թ., Կ Պոլսո 381 թ. և Եփեսոսի 431 թ., նա «առաջնորդ վարդապետներու» հաղորդած տեղեկությանց և փաստարկության հիման վրա Քաղկեդոնի վարդապետությունը կբացատրե որպես նեստորական իմացություն։ «Նեստորաբար իմացմամբ սահման եդեալ յետ անճառ միաւորութեան Բանին և մարմնոյն՝ երկու բնութիւնս բաժանարար ի մի Տէր Յիսուս Քրիստոս խոստովանեցին» կգրե և կշարունակե. «Եւ երկուս կամս և երկուս ներգործութիւնս, և զԽաչն և զմահն մարդոյն միայնոյ սահմանեցին, և ոչ Աստուծոյ մարդ եղելոյ ի սուրբ Կուսէն Աստուածածնէ, զոր ոչ աւանդեաց մեզ Լուսավորիչն մեր սուրբ Գրիգոր հանդերձ այլաւք վարդապետաւք»[9]։ Հետաքրքրաշարժորեն՝ թեպետ Գրիգոր Լուսավորչի ժամանակ քրիստոսաբնական խոստովանությունները ու վիճաբանությունները V դարու նկարագիրն ու սաստկությունը չունեին, այնուհանդերձ նա կհիշվի որպես Հայաստանյայց եկեղեցվո դավանության մեծագույն հեղինակությունը։ 325 թ., երբ առաջին տիեզերական ժողովը պիտի գումարվեր ընդդեմ Արիոսի, Գրիգոր Պարթև իր վերջին օրերը կապրեր և այդ պատճառավ կրտսեր որդին՝ Արիստակեսը ուղարկեց Նիկիա։

Անշուշտ հայ և բյուզանդական եկեղեցիներու ծանրագույն տարբերությունը Քրիստոսի բնության և կամ Քաղկեդոնի ժողովի հարցն էր։ Այդ պատճառավ Գագիկ ընդարձակորեն կբացատրե հայ եկեղեցվո տեսակետը և եկեղեցական հայրերե պիտառություններով կհիմնավորե ու կճոխացնե իր պաշտպանողականը։ Քաղկեդոնական վարդապետության հարակցումը նեստորական ուսուցման հետ՝ դժբախտ պարագա մըն էր և բնականորեն անհաճո Բյուզանդիոնի կայսեր և աստվածաբաններուն։ Բայց Վասպուրականի թագավորին նպատակը անկասկած բյուզանդացիները գրգռել կամ զայրացնել չէր, այլ ընդհակառակը՝ հաշտության և համերաշխության միջոց մը գտնել։ Մելիտոս կամ Մելիտիոս Անտիոքացվո բանաձևումով, որ առաջին անգամ

---

[4] Steven Runciman. The Emperor Romanus Lecapenus and his Reign. Cambridge/England, 1963. 13 —38.

[5] Մ. Չամչյանց. Պատմութիւն Հայոց. Բ, Վենետիկ, 1785, էջ 818—822։

[6] V. Grumel. La Chronologie (Bibliothèque byzantine Traité d'Etudes byzantines—1). Paris. 1958, 436; Hans-Georg Beck. Kirche und theologische Literatur im byzantinischen Reich. München, 1059/1977, 803, նշանակուած 925—928.

[7] Գիրք Թղթոց (ԳԹ). Թիֆլիս, 1901, էջ 295։ Անորոշ կմնա Ռոմանոս կայսեր հետաքրքրական նամակի հասցեատերը։ Նամակը հասցեագրված կնկատվի կամ արաբ ամիրայի մը, կամ Գագիկ Արծրունիի, կամ Արաս Բագրատունիի. տե՛ս Կ. Ն. Յուզբաշյան. Ռոմանոս Լակապենոս կայսեր անհայտ հասցեատերը.—«Լրաբեր հասարակական գիտությունների», 1974, № 1, էջ 35—43։

[8] ԳԹ, էջ 295։

[9] ԳԹ, էջ 296։

այս նամակի մեջ կհայտնվի, Գագիկ կհուսա հաջողություն գտնել։ «Մի բնութիւն խոստովանիմք և երկու գոյացութիւնք»[10] կըսե Անտիոքի եպիսկոպոսը, որ 361 թ. Կ. Պոլսո տիեզերական ժողովի նախապատրաստության մեջ կարևոր դեր խաղացած էր[11]։ «Մի բնություն» [illegible] բանաձևումով՝ հայք կխոստովանեին Կյուրեղ Աղեքսանդրացվո «մի բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» ուղղափառ վարդապետությունը և երկու գոյացություն (ousia) բացատրությամբ կփարատեին միաբնակներուն վերագրյալ «բնություն—գոյացություն» շփոթությունը։ Պարզորոշ է, թե հայ եկեղեցին մի բնություն խոսքով կարտահայտեր և կարտահայտե ոչ թե միակ բնություն ի Քրիստոս. այլ աստվածային և մարդկային բնությանց հրաշալի միավորությունը։ Այս տեսակետեն, VIII դարուն արդեն հայոց անվանի իմաստասերն ու աստվածաբանը՝ Հովհաննես Օձնեցի, կփորձեր տարակարծությունները հարթել՝ «է ըստ բնութեան երկուց՝ աստուածային և մարդկային, իսկ ըստ միաւորութեան՝ մի» բանաձևումով և Բարսեղ Կեսարացվո վկայակոչմամբ կրնդգծեր՝ «երկուց գոյացութեանց կատարելոց միաւորութիւն»-ն[12]։

Քաղկեդոնի հարցեն զատ՝ հայ և բյուզանդական եկեղեցիներու կարևորագույն տարբերությունը Երրորդության փառաբանության նվիրյալ «Սուրբ Աստուած» երգի «որ խաչեցար վասն մեր» հավելվածի պարագան էր։ Սույն բանաձևի հեղինակն կնկատվի Պետրոս Կնափեոս Թափիչ Անտիոքացի, ծագումով Քաղկեդոնեն (մեռ. 488)։ Հարցը ըստ ինքյան պարզ է, բայց միջին դարուն պատճառ հանդիսացած կրքոտ վիճաբանություններու։ Ասորիքի, Եգիպտոսի և Հայաստանի աստվածաբանները կպնդեն, թե «որ խաչեցար» խոսքը կվերաբերի միայն Քրիստոսի, մինչդեռ բյուզանդացիք աղանդավորական վտանգ մը կտեսնեին՝ խորհելով, որ գուցե ոմանք խաչելությունը ընդհանրապես Երրորդության հետ առնչէին և կամ աստվածային բնությունը ևս խաչյալ իմանային։ Կարելի է անվարան հաստատել, որ այս հարցը շարունակությունն էր Քաղկեդոնի կամ բնությանց վեճերուն։ Եթե երկու կողմերը կարենային փոխադարձաբար որոշ հանդուրժողություն և հասկացողություն ցուցաբերել, վստահորեն ընդհանրական եկեղեցվո կխնայվեին ցավալի կաց ու կռիվներ։ Համենայն դեպս Գագիկ Արծրունի, իր տեղեկությունները քաղելով հեղինակավոր վարդապետներե, ընդարձակորեն կլուսաբանե «որ խաչեցար»-ի իմաստը և հետևյալ բացատրությունը կարձանագրե. «Քաւ մի լիցի. ոչ Երրորդութեանն զփառաբանութիւնս զայս վերածայնեմք, այլ Որդւոյ միայնոյ. որպէս զմարդանալն ի Կուսէն՝ Որդւոյ միայնոյ հաւատամք, այսպէս զխաչն և զմահն Որդւոյ խոստովանիմք»։ Առ այս նամակագիրը կպիտառե Սոկրատի Եկեղեցական պատմությենեն վկայություն մը՝ ըստ որում Հովհան Ոսկեբերան (շ. 344/45—407), արիոսականներու դեմ պայքարի ընթացքին, հրահանգած էր գիշերային պաշտամունքի ժամանակ Երրորդությունը փառաբանել առանց «որ խաչեցար»-ի, իսկ առավոտյան ժամերգության մեջ Երեքսրբյանը «Որդվոյ ընծայեցուցանել»[13]։ Արծրունի կհիշե նաև

---

10 ԳԹ, 297։

11 Գարեգին վրդ. Զարբհանալյան. Մատենադարան Խարմանութեանց նախնեաց. Վենետիկ, 1889, էջ 564. կնշե Մելիտիոսի «ի լուացումն ոտից աշակերտաց» ճառը։ Պիտառություն մը կգտնենք ի նպաստ Ծննդյան և Մկրտության հունվար 6-ի տոնակատարության, «ի թղթին Մելիտոնի եպիսկոպոսի՝ որ առ Եվտր[եպիոն] եպիսկոպոսին» («Արարատ», 1896, Ա, էջ 50), որ սակայն կարող է Մելիտոն Սարդեցվոյ (II դար) հարազատ կամ անհարազատ գրություններեն լինել. Alfons Heilmann-Heinrich Kraft Texte der Kirchenväter, Band 5, Kösel-Verlag München, 1966, 372—73.

12 Հովհաննես Իմաստասեր Օձնեցի. Ընդդէմ երևութականաց.—Մատենագրութիւնք, Վենետիկ, 1953, էջ 68։

13 ԳԹ, էջ 298։ Սոկրատայ Պատմութիւն եկեղեցական (անվանեալ Փոքր Սոկրատ) և Վարք Սրբոյն Սեղբեստրոսի, հրատ. Մեսրոպ վրդ. Տէր Մովսէսեան. Վաղարշապատ, 1897, էջ 123—25. հմմտ. Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղեցական պատմութիւն, հրատ. Մ. Վրդ. Տէր Մովսէսեան. Վաղարշապատ, 1897, էջ 528—525։

Սոկրատա մյուս վկայությունը՝ թե Իգնատիոս Անտիոքացի (I—II դդ.) առաջինն էր, որ կարգադրեց «յերեկոյս եւ ի վաղորդեան»՝ պաշտամունքի ժամուն Երեքսրբյանը ի վերա Որդվո երգել[14]։ Սույն տեղեկությունները Գագիկ քաղած է Սոկրատի Պատմության հայերեն խմբագրութենեն կամ այսպես կոչված «Փոքր Սոկրատ»-են, որովհետև բուն Սոկրատի Պատմության մեջ նման հաղորդումներ չկան։ Հետևաբար, կենթադրեմ, որ Բյուզանդիոնի կայսրը, Կ. Պոլսո պատրիարքը և այլ աստվածաբաններ զարմացած պիտի ըլլան հայոց այս մեկնաբանության վերա։

Վաղապուրականի թագավորը իր թուղթին մեջ աստվածաբանական և աղբյուրագիտական խոր հմտություն կցուցաբերե։ Թեպետ նա քանիցս կնշե թե «հարցի յառաջնորդաց մերոց» կամ «հարցի դարձեալ վարդապետացս մեր», բայց անկասկած իր գրական արդյունքն է երկախոսության այս փաստաթուղթը։ Նա հայտնապես ի ձեռին ունեցած է «Կնիք հաւատոյ» և «Գիրք թղթոց» հավաքածուները, ինչպես և Տիմոթեոս Կուզի «Հակաճառութիւն»-ը և Գրիգոր Լուսավորչի «Վարդապետութիւն»-ը՝ Ագաթանգեղոսի գրոց մեջ։ Ուղղակի և կամ անուղղակի այս և նման ժողովածուներու միջոցավ օգտագործեր է Իրենեոս Լուգդունացվո (II դար), Գրիգոր Սքանչելագործի (III դար), Աթանաս Աղեքսանդրացվո (IV դար), Մելիտիոս Անտիոքացվո (IV դար), Կյուրեղ Երուսաղեմացվո (IV դար) և Գրիգոր Նազիանզացի Աստվածաբանի (IV դար) գրությունները և քաղվածաբար կամ բառացի վկայակոչումներ կատարած։ Նամակի վերջավորության Արծրունի համառոտ պատմությունը կգրե Քաղկեդոնի ժողովին առնչակից պայքարներու, կշեշտե թե Աղեքսանդրիո, Երուսաղեմի, Անտիոքի, Կ. Պոլսո և Հռովմի աստվածաբաններեն և Բյուզանդիոնի կայսրերեն ոմանք բուռն ընդդիմություն ցույց տվին IV տիեզերական ժողովի որոշումներուն դեմ և կհիշե թե ինչպես Բաբգեն Ութմսեցի կաթողիկոսի (490—516) օրով՝ Դվինի 508 թ. համագումարին, հայք և վրացիք (գլխավորությամբ Գաբրիել կաթողիկոսի)[15]՝ «ընդդէմ ժողովոյն միախորհ եդին ընդդիմակս»[16]։ Դժբախտաբար ոևէ տեղեկություն չունինք այն վարդապետներու մասին, որոնք աղբյուրներ կամ փաստաթուղթեր հայթայթած են Արծրունյաց թագավորին։ Եթե նամակը իսկապես 926/27 թ. գրված է, այդ պարագային կարելի ենթադրել, թե Հովհան Դրասխանակերտցի (897—929), որ ճիշտ այդ տարին քաղաքական ապահովության պատճառավ հայրապետական Աթոռը Աղթամար փոխադրեց՝ անպայման օժանդակած պիտի ըլլա։ Նաև Հովհաննեսի հաջորդները՝ Թեոդորոս Ռշտունի և Եղիշե Ռշտունի, որպես եպիսկոպոս կամ կաթողիկոս՝ կրնան օգտակար հանդիսացած լինել։ Հավանաբար երկու Անանիաները ևս՝ Անանիա Մոկացի կաթողիկոս (946—968) և Անանիա Նարեկացի՝ հիմնադիր ու առաջնորդ Նարեկա վանուց և դպրոցի և հեղինակ հակաքաղկեդոնական «Հաւատարմատ» աշխատության, որոնք կարևոր մտավորական անձնավորություններ էին, քաջալերած են Արծրունին։ Գագիկ իր նամակը կավարտե կոչով մը՝ վերացնելու տարբերությունը կամ միջնորմը և երկու կողմերը միավորելու հաշտության նոր բանաձևի մը մեջ. «Եթէ իցէ՞ արդեւք հնարաւոր, ի բաց բառնալ զկրճիմն՝ որ կայ ի միջի, ըստ Առաքելոյն Պաւղոսի, զցանկն քակել և զմիջնորմն յատակել, և զերկուսինն հաստատել ի մի նոր մարդ, յոր կոչեցաք ծննդեամբ սուրբ աւազանին»[17]։

Հայոց վարդապետները Գագիկի թուղթը այնքան կարևոր նկատեր են, որ զայն առած են Գիրք թղթոց ժողովածուին մեջ։ Գործնական տեսակետ՝ անշուշտ նամակը չէր կարող իրականացնել եկեղեցական միությունը, որով-

---

14 ԳԹ, էջ 298։ Փոքր Սոկրատ, էջ 123—25. հմմտ. Ստեփանոս Սյունեցվո «Պատասխանի Թղթոյն Անտիոքու եպիսկոպոսի».— ԳԹ, էջ 330 և Սահակ Զորափորեցիի «Ընդդէմ երկաբնակացն Նեստորականաց» թուղթը.— ԳԹ, էջ 466։

15 ԳԹ, էջ 300. հմմտ. նույն տեղում, էջ 177 և 182։

16 ԳԹ, էջ 300։

17 ԳԹ, էջ 301. հմմտ. Թուղթ առ Եփեսացիս, Բ, 14—15։

հետև դժբախտաբար միջնորմը շատ զօրավոր էր և «Քաղկեդոնը մոռանալ հեշտ չէր»[18]։ Համենայն դեպս, չի կրնար առ այդ կասկած լինել, որ Արծրունյաց թագավորը իր աստվածաբանական թուղթով հաջողեցավ շահիլ Ռոմանոս կայսեր համակրությունը և ապահովել անոր քաջալերությունը՝ ի նպաստ Վասպուրականի դիրքի հզորացման[19]։

X—XI դդ. հայ-բյուզանդական քաղաքական-եկեղեցական երկխոսության շահեկան վավերաթուղթերեն մին ևս՝ Գագիկ II Բագրատունիի (շ. 1024—1079, թագավոր 1042—1045) հավատո գիրն է՝ ուղղյալ Կոստանդին Դուկաս կայսեր։ Ըստ Մատթեոս Ուռհայեցվո՝ 1065-ին Սանահնի միաբաններեն Հակոբոս վարդապետ Քարափնեցի որպես աստվածաբան և պատգամավոր՝ Աբուսահլ և Ատոմ Արծրունի արքայորդվոց հետ Կ. Պոլիս գացած էր մասնակցելու միարարական խոսակցությանց։ Գովասանական արտահայտություններե, բարեկամական զգացումներե և կամ առատ նվերներե շլանալով՝ նա Հոռոմոց կողմը դարձավ և այնպիսի վարդապետական թուղթ մը գրեց, որ բյուզանդացվոց կայսրը խորապես գոհ մնաց։ Դժբախտաբար Քարափնեցվո նամակը մեզ չէ հասած, որ կարենայինք արդար դատաստան մը կատարել։ Բայց քանի Կոստանդին կայսր հավատո գիրը իբր կարևոր վկայաթուղթ հրամայած է Ս. Սոփիոյ դիվանատան մեջ ի պահ դնել, այդ կնշանակե հեղինակը զիջողական տեսություններ և մեկնաբանություններ գրած էր։ Ճիշտդ այդ օրերուն «իբրև զարծիւ թռուցեալ հասանէր Գագիկ ի Կոստանդինուպօլիս» և տեղեկանալով Հակոբոս վարդապետի գրության բովանդակության՝ «պատառեաց զնա առաջի թագաւորին յերկուս ծուէնս և ընկեց զնա յերկիր»[20]։ Թատերգական այս տեսարանին՝ ակնկալելի էր որ հետևեր կայսեր զայրագին պոռթկումը. բայց հետաքրքրականորեն ցասման փոխարեն «թագաւորն տեսեալ՝ ամաչեաց յոյժ»[21]։ Անշուշտ արագ ընթերցման կամ շփոթության արդյունք է Հրաչյա Աճառյանի վերարտադրությունը՝ որպես թե Գագիկ հայտարարած ըլլա. «Այդպիսի վարդապետներ հարյուրներով կան Հայաստանում. իսկ թագավորը մի հատ է»[22]։ Հիրավի ըստ Ուռհայեցվո թագավորը պատասխանած է. «Ահա սա այր կրօնաւոր է, և այսպիսի բազումք կան յաշխարհն Հայոց, որք ոչ ընդունին. և ոչ ոք հնազանդի գրոյ սորա, և մեք ընդ կատարեալ վարդապետսն Հայոց ոչ ունիմք զսա»։ Ապա Բագրատունյաց վերջին և դժբախտ թագավորը ինք անձամբ կգրե հավատո թուղթ մը[23] և զայն կհանձնե Կոստանդին կայսեր և Հովհաննես Ը պատրիարքին (1064—75)։

Գագիկ Բագրատունվո հավատո գիրը, համեմատությամբ Գագիկ Արծրունիի վարդապետական թուղթին, կբովանդակե ավելի նյութեր՝ ոչ միայն երկու բնությանց հարցը և Երեքսրբենի վեճը, այլև Երրորդության դավանությունը և ծիսական-տոմարական խնդիրներ։ Գրության սկիզբը՝ հեղինակը կխոսի Արարչության և Երրորդության մասին, կշեշտե Հոր, Որդիին և ս. Հոգվոյն համահավասար և փառավորակից լինելը և կեզրակացնե. «Երիս անձնաւորութիւն և կամք մի, կամ հաճութեան, կամ տէրութեան. մի ուստեք ի

---

18 S. Runciman. Op. cit., p. 138.

19 Նույն տեղում։

20 Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ. Երուսաղէմ, 1869, էջ 194. Մատթէոս Ուռհայեցի. ժամանակագրութիւն. Վաղարշապատ, 1898, էջ 162. Մատթեոս Ուռհայեցի. ժամանակագրություն, թարգմանությունը Հրաչ Բարթիկյանի. Երևան, 1973, էջ 106։

21 Ուռհայեցի. ժամանակագրութիւն (1898), էջ 162։

22 Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. Գ, Երևան, էջ 484, թ. 16։

23 Ուռհայեցի. Պատմութիւն, էջ 195—214։ ժամանակագրութիւն, էջ 163—78։ ժամանակագրություն (արևելահայերեն), էջ 106—117։ Chronique de Matthieu d'Edesse, traduit par M. Edouard Dulaurier. Paris, 1858, 135—50. The Chronicle of Matthew of Edessa, translated by Ara E. Dostourian. New Brunswick/New Jersey, 1972, 189—208; V. Grumel. Les regestes des actes du Patriarcat de Constantinople, Vol. I, fasc. iii, „Les regestes de 1043 à 1206", Socii Assumptionistae Chalcedonenses, 1936, 21, № 895.

նոսա երիցութիւնք կամ կրտսերութիւնք» ևն[24]։ Հայոց դավանության մասին ամեն թյուրիմացություն փարատելու մտոք, Գագիկ կհիշե և կնշվե գլխավոր հերձվածողներն ու աղանդավորները. Վաղենտինոս (II դար), Մարկիոն (մեռ. շ. 160 թ.), Մոնտանոս (շ. 150), Մանի (մեռ. 277), Նովատիանոս (շ. 250), Սաբելլիոս (շ. 260), Արիոս (մեռ. 336 թ.), Փոտինոս (IV դար), Նեստոր (պատրիարք Կ. Պոլսո, մեռ. շ. 451), Եվտիքես (դատապարտյալ 451 թ. ի ժողովոյն Քաղկեդոնի)։ Սարգիս հայ աղանդավորն, Պողոս Սամոսատցի (Եպիսկոպոս Անտիոքի 260—70), Պետրոս Կնափեոս (պատրիարք Անտիոքա 471—488) և Դիոսկորոս / Դեոսկորոս Աղեքսանդրացի (պատրիարք Աղեքսանդրիո 444—451, մեռ. 454)։ Պետրոս Կնափեոսի կամ Թափիչի դատապարտությունը՝ վստահորեն արդյունք է թյուրիմացության։ Նա հեղինակն է Երեքսրբենի «որ խաչեցար վասն մեր» հավելվածի, հայ աստվածաբանական գրականության մեջ միշտ որպես ուղղափառ և հարգարժան անձ մը կնկատվի[25], և մինչև իսկ Ստեփանոս Սյունեցվո թուղթին մեջ «սուրբ» կանվանվի[26]։ Դիոսկորոս արքեպիսկոպոս, ջերմ պաշտպան «Մի է բնութիւն Բանին Աստուծոյ մարմնացելոյ» բանաձևին և դավանության և հաջորդ Կյուրեղ պատրիարքի՝ Աղեքսանդրիո Աթոռին վրա 444-ին, նմանապես հայ եկեղեցվո կողմանե իբր ուղղափառ վարդապետության ախոյան կճանչվի[27] և «երանելի»[28] ու «մեծ»[29] մակդիրներով պատվված է։ Վասպուրականի Գագիկ Արծրունի թագավորի թուղթին մեջ ևս նա կհիշվի որպես ընդդիմադիր Քաղկեդոնի ժողովի[30]։ Թեպետ Օրմանյան կեզրակացնե՝ «որով կճշդվի հայոց դավանության Կյուրեղի և ոչ Դեոսկորոսի դրության վրա հաստատված ըլլալը»[31], բայց հիրավի Գագիկ Բագրատունի դիվանագիտական դարձվածով մը կշանա հաճո թվիլ բյուզանդացվոց. «Սոյնպէս և զԴէոսկորոսն՝ եթէ խորհեցաւ յայսպիսի ինչ հերձուածս, և եղիցի նզովեալ ըստ ձեր աւելաբանութեան խոսիցդ»[32]։ Հերձվածողաց և աղանդավորաց նզովքին կհետևի Մարդեղության և Խաչելության, ինչպես և Մարիամու աստվածամայրության հարցերու համատեղ պաշտպանողական բացատրությունը։ Առ այս նամակագիրը իր տեսությունը զօրացնելու մտոք՝ Գրիգոր Սքանչելագործեն կպիտառե «մի բնութիւն խոստովանելի է յետ միաւորութեան՝ կարողակից արարեալ զմարմին հողեղէն՝ Աստուածութեանն»[33] խոսքը և Գրիգոր Նյուսացիեն հառաջ կբերե հետևյալ վկայությունը. «Նոր իմն է յեղանակս այս խառնմանս և միաւորութեան և խառնի և մնայ յամենայնի ամենայնիւ՝ անխառն և անշփոթ և անապական և անփոխադրելի»[34]։ Երեքսրբենի «որ խաչեցար վասն մեր» երգասացությունը՝ հեղինակը կպաշտպանե որպես Որդվույն ուղղյալ փառաբանություն և կհավելու՝ եթե ոևէ մեկը Հոր և Հոգվույն վրա ևս իմանա՝ «դատախազ գտցի երից Աստուածութեանն»[35]։ Անապակ բաժակի և անխառն հացի սովորությունը նա կհասկանա և կշատագովե ոչ իբր տարբեր ավանդություն՝ այլ որպես արտահայտություն Հիսուսի մարմնառության և երկու բնությանց անբաժանելի ու անխառն միավորության. «Իսկ մեք Աստուծոյ միայն երկիրպագանեմք և խոստովանիմք. և անբաժանելի խառնումն զԱստուածութեանն և զմարմնոյն հաւանիմք, զի մի և մարմնոյն երկրպագելով՝ եւ չորրորդութիւն

24 Ուռհայեցի. ժամանակագրութիւն, էջ 164։ Դոստուրյան, էջ 190։
25 ԳԹ, էջ 126, 300, 333, 491, 494։
26 Նույն տեղում, էջ 328։
27 ԳԹ, էջ 259, 305, 307, 308, 331, 333, 492, 493—94։
28 ԳԹ, էջ 119, 120։
29 ԳԹ, էջ 328, 491։
30 ԳԹ, էջ 300։
31 Մ. Օրմանյան. Ազգապատում. Ա, էջ 1270։
32 Ուռհայեցի. ժամանակագրութիւն, էջ 166։ Դոստուրյան, էջ 195։
33 Նույն տեղում, էջ 167. հմմտ. Դոստուրյան, էջ 194։
34 Նույն տեղում, էջ 168. հմմտ. Դոստուրյան, էջ 195։
35 Նույն տեղում, էջ 172։

ի ներքս ածցուք փոխանակ Երրորդութեանն, և կամ մահուամբ մարդոյն միայն փրկեալ արեամբ՝ և ոչ աստուածայնովն»[36]։ Հավատո թուղթի շարունակության մեջ Գագիկ Բագրատունի կբացատրե և կճշդե Եղիսաբեթի հղության (9 հոկտեմբեր), Մարիամու Ավետման (7 ապրիլ) և Քրիստոսի ծննդյան ու մկրտության (6 հունվար) թվականները՝ համաձայն հայոց տոմարական հաշվարկության։ Վերջին հարցը Առաջավորի կամ Առաջավորաց պահոց և այս առնչությամբ՝ Սարգսի տոնի վեճն է։ Մեծ պահոց Բուն Բարեկենդանեն երեք և Զատկեն տասը շաբաթ առաջ հանդիպող կիրակին հայ եկեղեցվո մեջ կկոչվի «Առաջավորաց կիրակի» և անոր հաջորդող հինգ օրերը ծանոթ են «Առաջավորաց պահք» անունով՝ որպես Գրիգոր Լուսավորչեն հաստատված առաջին պահք։ Պահոց Ե կամ ուրբաթ օրը կհիշատակվի Հովնանու քարոզությունը և կամ Նինվեի ապաշխարությունը, իսկ Զ կամ շաբաթ օրը՝ կնշվի Սարգիս Զորավարի տոնը։ Բյուզանդացիք «Առաջավորաց պահք» չունին և հայոց ս. Սարգիսը կանարգեն և առասպելախառն պատմություններու կհավատան։ Հիրավի Սարգիս անվան մեջ ամփոփված են տարբեր անձնավորություններ և վիպական զրույցներ և ժողովրդական ավանդություններ։ Հիշատակելի են՝ Սարգիս զորավար Տրդատ թագավորի (IV դար), Սարգիս ճգնավոր Դվինի (VII—VIII դդ.), Սարգիս իշխան, որ հույն աղջիկ մը առնանգած է[37]։ Գագիկ կպնդե, թե հայոց Սարգիսը «ստրատելատ» կամ զորավար էր «յաւուրս Թէոդոսի թագաւորին», որ և Բագրևանդ գավառի մեջ իբր հշմարիտ մարտիրոս նահատակվեցավ «յորդւոցն Հագարու»։ Արևելյան-հռովմեական կամ Բյուզանդական կայսրության պատմության մեջ ծանոթ են երեք Թեոդոսներ.

1. Թեոդոսիոս I, ի Արևելս (379—395),
2. Թեոդոսիոս II, ի Արևելս (408—450),
3. Թեոդոսիոս III (715—716)։

Հագար կամ հագարացի անունը ընդհանրապես արարաց և մասնավորաբար իսմայելացվոց հետ կառնչվի, բայց կրնա նաև պարսից համար դործածված չինել։ Բագրատունվո տվյալները եթե տառացիորեն ըմբռնենք, այդ պարագային Սարգիս ստրատելատ վկայված է VIII դարու սկիզբը։ Բայց ինձ առավել հավանական և վավերական կթվի Ներսես Շնորհալվո բացատրությունը՝ ըստ որում Սարգիս քաջամարտիկ ու բարեպաշտ իշխան մըն էր Կապադովկիայեն, Կոստանդիանոս Մեծի շրջանին (306—324)։ 361 թ., երբ անօրեն Հուլիանոս բռնությամբ տիրացավ կայսերական գահին, Սարգիս և իր որդին փախան Պարսկաստան և անդ Շապուհ արքայի հրամանով գըլխատվեցան՝ հաստատ ու անարատ պահելով իրենց քրիստոնեական հավատքը[38]։ Այս Սարգիսն է, որ իր որդվոյն՝ Մարտիրոսի հետ հատուկ տոնով կհիշատակվի հայ եկեղեցվո մեջ՝ Առաջավորաց պահոց շաբաթ օրը։ Իսկ Սարգիս հայ հերձվածողը՝ հավանորեն Հովհաննես Մայրավանեցվո աշակերտն էր, որ թարգմանած էր Հուլիանոս Հաղիկառնացվո գրությունները և հետևող հանդիսացած երևութական աղանդի[39]։

Մատթեոս Ուռհայեցի բարձր գնահատանքով և գովասանքով կխոսի Գագիկ Բագրատունիի գրական-աստվածաբանական հմտության և շնորհներու մասին։ Նա կգրե. «Եւ փառաւորեցաւ անունն Գագկայ ընդ ամենայն վարդապետաց տանն Հայոց, որք երեւեցան յայնմ ժամանակին լուսաւորք»[40]։ Այն, որ քաղաքական մարզի մեջ խաբվեր էր բյուզանդացիներեն և արքայական գահը կորսնցուցած, ոգի ի բռին չանաց պաշտպանել հայոց հոգևոր-եկեղեցական անկախությունը։ Եվ արդարև Դուկաս կայսրը և կայսերական ճեմարանի իմաստասերները՝ չկամենալով նոր վիճաբանություններ և կռիվ-

---

36 Նույն տեղում, էջ 174։ Դոստուրյան, էջ 202։
37 Հ. Աճառյան. Հայոց անձնանունների բառարան. Դ, 402—404, թ. 1։
38 Ներսես Շնորհալի. Ընդհանրական թուղթք. Երուսաղեմ, 1871, էջ 141—43։
39 Հ. Աճառյան. նշվ. աշխ., էջ 405, թ. 12։
40 Ուռհայեցի. Ժամանակագրութիւն, էջ 179։

ներ ստեղծել՝ հավանեցան Դագիկի գրույն, որ Հայաստանեայց եկեղեցվո հավատո խոստովանության անբիծ և անաղարտ լինելը կապացուցաներ, և արտոնություն շնորհեցին հայոց՝ որպեսզի նոր կաթողիկոս մը ընտրեն։ Հիրավի Խաչիկ Անեցիի (1058—1065) վախճանումեն ետք՝ հոռոմք արգելք կը-հանդիսանային հայրապետական ընտրության։ 1066 թ. ապրիլ ամսուն, հայեր հանձին Գրիգոր Մագիստրոսի որդի Վահրամ-Գրիգոր Վկայասերի (մեռ. 1105)՝ ընտրեցին մտավորական հովվապետ մը և ապահովեցին Հայաստանեայց եկեղեցվո անկախ ու ինքնիշխան գոյատևումը։ Բյուզանգացվոց զիջողական և մեղմ վերաբերմունքին հիմնական պատճառը բնականորեն սելճուգ թյուրքերու արագ հառաջխաղացումն էր Կենտրոնական Ասիայեն՝ Պարսկաստանի ե Անդրկովկասի միջոցավ դեպի Փոքր Ասիա։ 1071 թ. օգոստոս 26-ին, երբ Ռոմանոս IV Դիոգենես պարտություն կրեց Մանազկերտի ճակատամարտին՝ ընդդեմ Ալփ Արսլանի և գերի ինկավ թշնամիներուն ձեռքը, արդեն սկսած էր կայսրության անկումը։

Դագիկ Արծրունի և Դագիկ Բագրատունի թագավորներու հավատո թուղթերուն միջև կարելի է որոշ կապակցություն մը նկատել։ Վասպուրականի Սենեքերիմ-Հովհաննես արքայի (968—1021) որդիներեն՝ Ատոմ և Աբուսահլ 1065 թ. Սեբաստիայեն բյուզանդական արքունիք հրավիրված էին՝ որպեսզի հոռոմ աստվածաբաններու հետ միջեկեղեցական երկխոսություն մը կատարեին և եկեղեցիներու ցանկալի միությունը իրականացնեին։ Հակոբ Քարափնեցվո մոլորութենեն ետք, Արծրունիք իրենք գաղտնաբար կանչեցին Բագրատունյաց ժառանգորդը՝ որ պատշաճ պատասխան մը տար Տուկիծ կայսեր։ Ըստ Ուռհայեցվո հավաստիացման՝ բյուզանդացիք գոհ մնացին Դագիկի հավատո գիրեն «եւ յայնժամ արարին սէր և խաղաղութիւն ընդ որդւոց թագաւորացն Հայոց»[41]։ Թեպետ հայ-բյուզանդական եկեղեցական և քաղաքական հարաբերությունները ժամանակավորապես կանոնավորվեցան և սերտացան, բայց հիմնական ու ամբողջական միասնություն մը կարելի չեղավ իրագործել։ Վերջնական արդյունքի ձախողության համար՝ ճիշդ պիտի չըլլար այս կամ այն կողմը մեղադրել. հայեր իրավամբ պատրաստ չէին զոհելու իրենց եկեղեցվո կենսական նշանակություն ունեցող ինքնիշխանությունը, իսկ հոռոմք չկարողացան ճշգրիտ կերպով ըմբռնել սելճուգներու ներխուժմամբ ստեղծված կացության ծանրակշռությունը և շարունակեցին իրենց փոքրահոգի քաղաքականությունը։

41 Նույն տեղում, էջ 178։